ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2024 թվականի № 514-Ա

ՄՀԵՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2335-Ն որոշման № 1 հավելվածի 3-րդ կետի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի՝ 2024 թվականի նոյեմբերի 13-ի № 457-Ա որոշումը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական Մհեր Գևորգյանի՝ 2024 թվականի դեկտեմբերի 17-ի № Ն/1547-2024 զեկուցագիրը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական ***Մհեր Գևորգյանին*** 2024 թվականի դեկտեմբերի 17-ից 20-ը ներառյալ, չորս օրով գործուղել քաղաք Հրազդան (*Հրազդան համայնք*)՝ «Հրազդանի № 6 մանկապարտեզ», «Հրազդանի № 8 մանկապարտեզ» և «Հրազդանի № 11 մանկապարտեզ», 2024 թվականի դեկտեմբերի 23-ին և 24-ին, երկու օրով գործուղել գյուղ Արագյուղ (*Նաիրի համայնք*)՝ «Արագյուղի վարչական շրջանի մանկապարտեզ», 2024 թվականի դեկտեմբերի 25-ին և 26-ին, երկու օրով գործուղել գյուղ Բուժական (*Նաիրի համայնք*)՝ «Բուժականի վարչական շրջանի մանկապարտեզ», 2024 թվականի դեկտեմբերի 27-ին և 30-ին, երկու օրով գործուղել գյուղ Պողոշյան և գյուղ Ջովունի (*Նաիրի համայնք*)՝ «Պողոշյանի վարչական շրջանի մանկապարտեզ» և «Ջովունու վարչական շրջանի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների համար գույքի ձեռքբերման գործընթացի, ձեռքբերված գույքի քանակական և որակական համապատասխանության ուսումնասիրություն իրականացնելու համար:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը *(հաշվապահական հաշվառման բաժնին)* գործուղման հետ կապված ծախսերը *(օրապահիկ և ճանապարհածախս)* կատարել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՄԱՀԱԿՅԱՆ

2024 թվականի դեկտեմբերի 17
ք. Հրազդան